


# ԱՐԺԱՆԹԻՆԱՀԱՅԵՐՈՒ ԲՈՂՈՔԸ ԷՐՏՈՂԱՆԻ ԴԵՄ

Posted on September 9, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



«Արմենիա», Պուլենոս Այրես

Շաբաթ, Սեպտեմբեր 7ին, հակառակ տեղատարափ անձրեւին, Արժանթինի հայ համայնքը բողոքեց Թուրքիոյ Վարչապետ Ռեճեպ Թալիպ Էրտողանի դեմ, որ Պուլենոս Այրես կը գտնուէր 2020 թուականին համար Ողիմպիական Խաղերու Նստավայրը Պոլիս քաղաքի նշանակումը քաջալերելու Նպատակով: Ցուցարարները յատկապէս շեշտեցին Մարդկային Իրաւունքներու դեմ Թուրքիոյ ճնշումները եւ 1915/23 թուականներու Հայոց Տեղասպանութեան Նկատմամբ իր ժխտողական քաղաքականութիւնը:

Բողոքի ցոյցը Նախաձեռնեց Հ.Յ.Դ. Արմենիա Երիտասարդական Միութիւնը, որու Հարաւային Ամերիկայի Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Ռազմիկ Նալպանտեանը ընդգծեց, որ «Թուրքիոյ նշանակումը որպէս 2020 թուականի Ողիմպիական Խաղերու կազմակերպիչ երկիր բոլորովին կը հակասէ ողիմպիական էութիւնն ու ոգին, տրուած ըլլալով որ անոր Նպատակներէն մէկն է ազգերու համախմբումը մարզախաղի միջոցաւ»: Իր խօսքին մէջ Նալպանտեան Նոյնպէս ըսաւ. «Եթէ Թուրքիա Նպատակ ունի անգամ մը եւս իր թեկնածութիւնը Ներկայացնելու որպէս Ողիմպիական Խաղերու կազմակերպիչ երկիր, Էրտողանի կառավարութիւնը, որ մինչեւ օրս կը շարունակէ Հայոց Տեղասպանութեան հանդէպ իր ժխտողական քաղաքականութիւնը, եւ վերջերս ուղղակի իր երկրի բնակչութեան վրայ ճնշած է՝ Թաքսիմ հրապարակի ցոյցերու ընթացքին ու բազմաթիւ լրագրողներու բանտարկութեամբ, պետք է ընդունի քիւրտ ժողովուրդի իրաւունքները եւ վերջ դնէ իր հարձակողական արտաքին քաղաքականութեան, որու հետեւանքով հարակից երկիրներու կայունութիւնը վտանգի տակ դրուած է»:

«Արմենիա», Պուլենոս Այրես

Շաբաթ, Սեպտեմբեր 7ին, հակառակ տեղատարափ անձրեւին, Արժանթինի հայ համայնքը բողոքեց Թուրքիոյ Վարչապետ Ռեճեպ Թալիպ Էրտողանի դեմ, որ Պուլենոս Այրես կը գտնուէր 2020 թուականին համար Ողիմպիական Խաղերու Նստավայրը Պոլիս քաղաքի նշանակումը քաջալերելու Նպատակով: Ցուցարարները յատկապէս շեշտեցին Մարդկային Իրաւունքներու դեմ Թուրքիոյ ճնշումները եւ 1915/23 թուականներու Հայոց Տեղասպանութեան Նկատմամբ իր ժխտողական քաղաքականութիւնը:

Բողոքի ցոյցը Նախաձեռնեց Հ.Յ.Դ. Արմենիա Երիտասարդական Միութիւնը, որու Հարաւային Ամերիկայի Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Ռազմիկ Նալպանտեանը ընդգծեց, որ «Թուրքիոյ նշանակումը որպէս 2020 թուականի Ողիմպիական Խաղերու կազմակերպիչ երկիր բոլորովին կը հակասէ ողիմպիական էութիւնն ու ոգին, տրուած ըլլալով որ անոր Նպատակներէն մէկն է ազգերու համախմբումը մարզախաղի միջոցաւ»: Իր խօսքին մէջ Նալպանտեան Նոյնպէս ըսաւ. «Եթէ Թուրքիա Նպատակ ունի անգամ մը եւս իր թեկնածութիւնը Ներկայացնելու որպէս Ողիմպիական Խաղերու կազմակերպիչ երկիր, Էրտողանի կառավարութիւնը, որ մինչեւ

օրս կը շարունակէ Հայոց Ցեղասպանութեան հանդէպ իր ժխտողական քաղաքականութիւնը, եւ վերջերս ուղղակի իր երկրի բնակչութեան վրայ ճնշած է՝ Թաքսիմ հրապարակի ցոյցերու ընթացքին ու բազմաթիւ լրագրողներու բանտարկութեամբ, պետք է ընդունի քիւրտ ժողովուրդի իրաւունքները եւ վերջ դնէ իր հարձակողական արտաքին քաղաքականութեան, որու հետեւանքով հարակից երկիրներու կայունութիւնը վտանգի տակ դրուած է»:

